ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
rubensahakyan58@gmail.com
ՌՈՍՏՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտական գիտությունների թեկնածու,
ՀՀ Ոստիկանության կրթահամալիր
rosargsyan@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1919 Թ.)

Հայաստանում ոստիկանական դասընթացների հիմնադրման 100-ամյակի առթիվ Խորհրդային պատմագիտությունում ընդունված էր, որ ՆԳ մարմինների համար կադրեր պատրաստվել են բացառապես խորհրդային տարիներին, ուստի հիմնականում լուսաբանվում էր այդ տարիների միլիցիայի գործունեությունը: Այդ աշխատանքները հիմնականում հուշագրություններ են, այդուհանդերձ, միլիցիայի պատմությանը նվիրված գիտական ուսումնասիրություններ առկա են[1]: Հիմնահարցի լուսաբանման հետ կապված հիմնական դժվարությունը՝ միլիցիայի գործունեությանն առնչվող արխիվային վավերագրերի գրեթե անհասանելի լինելը, վերացավ ՀՀ անկախացումից հետո և պատմաբանները հնարավորություն ստացան օգտվել ՆԳ նախարարության գործունեությունը լուսաբանող վերոհիշյալ աղբյուրներից: Հրապարակվեցին հոդվածներ և ուսումնասիրություններ[2], որտեղ առաջին անգամ հետազոտվե-

[1] **Լոգվինով Ի.,** Էջեր Սովետական Հայաստանի միլիցիայի պատմությունից, Ե., 1975, **Апиян Н.А.** Развитие органов милиции в Армянской ССР (1920–1975 гг.), Е., 1979, **его же:** Из истории НКВД Советской Армении (1920–1946 гг.), Е., 1986; **Ванян А.** К вопросу об эффективности деятельности органов внутренних дел (ՀՍՍ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, № 5, с. 37–43):

[2] **Ավագյան Ռ.Զ.,** Հանցավորությունը Հայաստանի Առաջին Հանրապետությունում (1918–1920 թթ.), Ե., 1995, **նույնի՝** Հանցավորությունը Հայաստանում, Ե., 1997, **Վիրաբյան Վ.Հ.,** Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918–1920 թթ.) Ե., 2003, **Ասլանյան Տ.,** ՀՍԽՀ Ներքին գործերի ժողկոմատի ստեղծման պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսու-

ցին ոչ միայն Առաջին Հանրապետության ՆԳ նախարարության և միլիցիայի, այլև դրանից առաջ գործունեություն ծավալած իրավապահ մարմնի աշխատանքը[3]:

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը վերականգնում է իր անկախությունը: Կարճ ժամանակ անց կազմակերպվում են իշխանության մարմինները: Բաթումի պայմանագրով կրճատվել էր հայոց զինուժը: Հանրապետությունում և նրա սահմաններում գտնվող թուրք-քրդական ելուզակախմբերը, օգտվելով օսմանյան զորքի ներկայությունից, հարձակումներ էին կատարում հայկական բնակավայրերի վրա: Այդ ամենին գումարվում էին հայերից, ինչպես նաև եզդիներից կազմված տարաբնույթ քրեական խմբեր, որոնք հարձակումներ էին գործում բնակչության վրա: Սակավաթիվ և վատ զինված միլիցիան ի զորու չէր արդյունավետ պայքարել լավ զինված ու կազմակերպված ավազակախմբերի դեմ: Իրավիճակը փոխվեց Առաջին համաշխարհային պատերազմում Քառյակ միության, այդ թվում՝ Օսմանյան կայսրության պարտությունից հետո: Հայաստանի Հանրապետությունը սկսեց վերականգնել իր պետական սահմանները և պայքարել ներքին կարգուկանոն հաստատելու համար: Բացի զորամասերից, տեղակայվում էին նաև միլիցիայի ստորաբաժանումներ:

Ինքնին հասկանալի է, որ միլիցիան իր կազմով և կադրերով չէր համապատասխանում ստեղծված իրավիճակին: 1919–1920 թթ. պետության համար ուղղակի աղետ էր դասալքությունը, որը զանգվածային էր: Ինչպես նշում է Վ. Վիրաբյանը, դասալքությանը նպաստում էին ՆԳ և միլիցիայի աշխատակիցները, «որոնց շնորհիվ էլ դասալքությունը ահռելի չափերի էր հասել և դարձել

հետև՝ ԲՀԱ), 2008, № 2, էջ 144–158, **Ալեքսանյան Կ.,** Խորհրդային իշխանության ամրապնդումն Ալեքսանդրապոլի գավառում (1921 թ. ապրիլ-դեկտեմբեր), ԲՀԱ, 2008, № 1, էջ 73–91, **Սարգսյան Ռ.Հ., Սահակյան Ռ.Օ.,** Հայոց ոստիկանության պատմությունից, մաս 1, Ե., 2013, **Սարգսյան Ռ.Հ., Սահակյան Ռ.Օ.,** Հայաստանի ոստիկանության պատմությունից, մաս II, Ե., 2015, **Սարգսյան Ռ.,** Երևանի միլիցիայի դպրոցի հիմնադրման պատմությունից, Երևան 4: Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 157–167:

[3] **Սահակյան Ռ.Օ.,** Հայկական ոստիկանության կազմակերպումն ու գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8 – հուլիսի 17), Ե., 2008, **նույնի՝** Միլիցիայի կազմակերպումը Վանի նահանգում (1915 թ. հոկտեմբեր – 1916 թ. սեպտեմբեր), Պատմաբանասիրական հանդես, 2018, № 1, էջ 149–160:

անզսպելի»[4]: Մի շարք դեպքերում «միլիցիան զինված է պատահական զենքերով, հաճախ չի ունենում փամփուշտ և այլն»[5]:

Այնուամենայնիվ, միլիցիայի աշխատակիցների գիտակից մասը շարունակում էր ազնվորեն ծառայել հայրենիքին: Որպես օրինակ վկայակոչենք 1920 թ. ապրիլի 4-ին ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանի հրամանը, ըստ որի Ջաֆարաբադի (այժմ՝ Արգավանդ) պահկետի ավագ միլիցիոներ Համբարձում Հակոբյանին հայտնվում է շնորհակալություն և նա պարգևատրվում է 20 հազար ռուբլով: Միլիցիոները Ջաֆարաբադ գյուղում կալանավորում է Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչներին, որոնք Զանգիբասարի գավառի (այժմ՝ Մասիս) մահմեդական խռովարարների համար տեղափոխում էին մեծ գումար: Հ. Հակոբյանին առաջարկվել է մեծ կաշառք, որից իրավապահը հրաժարվել է[6]:

Կառավարությունը իր առաջնահերթ խնդիրներից էր համարում միլիցիայի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպումը, որոնք, ըստ հանգամանքների, կարող էին լինել մեկամսյա կամ ութնամսյա:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում, տպագրվում են առաջին անգամ՝ ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, սակայն ոճը պահպանելով: Փաստաթղթերի վերնագրերը մերն են: Մեր միջամտությունները կատարվել են ուղղագիծ փակագծերով:

---

[4] **Վիրաբյան Վ.,** Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը, էջ 54:

[5] **Վիրաբյան Վ.,** Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան, էջ 79:

[6] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Պատասխանատու խմբագիրներ՝ Գալոյան Գ., Ղազախեցյան Վ., Ե., 2000, էջ 181:

N 1
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԴԱՏԱ-ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ
N 1649 8 յուլիսի 1919 թ.
Երևան

Այսու ներկայացնում եմ «Դատա-Ոստիկանական դասընթացքների» կանոնադրութիւնը, խնդրում եմ Մինիստրների Խորհրդի ընդունել այդ օրէնքը կցուած նախահաշուի հետ ի միասին:

Արդարադատութեան Մինիստր՝ Յարութիւն Չմշկեան[7] [ստորագրություն]
Դիւանապետ՝ Խանդամիրեան [ստորագրություն]

Մակագրություններ՝ «Вх. 2160, 9/VII. [19]19 г., 7/919».

ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ. 16, թ. 370: Բնագիր: Ձեռագիր:

N 2
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

[8 յուլիսի 1919 թ.]
[Երևան]

Երևանի քաղաքային միլիցիայի համար Քրեակ[ան] Դատավ[արության] Կանոնագրքի Կարգով միլիցիաներ պատրաստելու և Հայաստանի Հանրապետութեան միլիցիայի իրաւունքների և պարտականութիւնների մասին նրանց լայն տեսական ծանօթութիւն տալու նպատակով՝ Երևանի Շրջանային Դատարանի դատախազի օգնականի հսկողութեամբ հիմնւում է դասընթացներ «Դատա-ոստիկանական դասընթացներ» անունով:

---

[7] **Չմշկյան Հ.,** ՀՀ արդարադատության նախարար (1919 թ. ապրիլի 27 – օգոստոսի 10):

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՏԱ-ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Դասընթացներում ուսանելու համար Միլիցապետն ուղարկում է 20 միլիցիականներ, անբիծ վարքի տէր, գրագետ, որոնք բացի հայերէնից, ըստ կարելոյն գիտեն ռուս և թիւրք լեզուներ:

2. Դասընթացներում ուսման ժամանակը մի ամիս է:

3. Դասընթացներում միլիցիականներին աւանդում են՝ սկզբնական տեղեկութիւններ Պետական ու Ոստիկանական իրաւունքներից, Քրեական Դատավ[արության] Կանոնագիրքը 250–261 յօդուածների սահմաններում, Անդրկովկասեան Ոստիկանական պահակի մասին Կանոնադրութիւնը, Երևանի Դատաստանական Պալատի պ[արոն] Դատախազի հրահանգը [Наказ] և համապատասխան մասերով Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան Օրենսդրութիւնը:

4. Ուսման ժամանակը լրանալուց յետոյ դասընթացներում տեղի են ունենում քննութիւններ, որտեղ իւրաքանչիւր միլիցիական պիտի յայտ բերի իր պարտականութիւնների ու իրաւունքների լուրջ գիտութիւնը:

5. Քննութիւնները յաջող տւած միլիցիականը ստանում է I կարգի միլիցիականի կոչում, նաև ծառայական իրաւունքներ ու առաքելութիւններ:

6. Քննութիւնները չբռնած միլիցիականը կարող է թողնւել դասընթացներում երկրորդ անգամ ուսանելու՝ իր իշխանութեան յատուկ միջնորդութեամբ:

7. Քննութիւների աւարտից յետոյ սկսւում է սոյն կանոնադրութեան 1 կետի համապատասխան՝ դասընթացների յաջորդ շրջանը, մինչև որ բոլոր միլիցիականները կանցնեն այդ դասընթացները, որից յետոյ դասընթացները փակւում են:

8. [Այս կետը հանված է փաստաթղթից]:

9. Դասընթացներում սովորողների վրայ կարգապահական իշխանութիւնը պատկանում է Միլիցապետի կողմից նշանակւած անձին:

10. Դասընթացները գտնւում են իրաւասութեան Մինիստրութեան սահմաններում [և] Երևանի Շրջանային Դատարանի Դատախազի անմիջական հսկողութեան ներքոյ:

11. Դատա-Ոստիկանական դասընթացներ կարող են բացւել Հայաստանի ամբողջ տերիտորիայում Ն. Գ. և Արդարադատութեան Մինիստրների փոխադարձ համաձայնութեամբ:

Շտատներ

Ուսուցանող դատախազի Օգնականի վարձատրութիւն …… 1500 ռուբ[լի]
Ծառայ …… 400 [ռուբլի]
կահաւորումն դասընթացի՝ միանւագ …… 25000 [ռուբլի]

Ծանօթ[ություն]՝ Թանգութեան պատճառով տոկոսային յաւելուածները չեն տարածւում դասընթացներում դասաւանդող Դատախազի Օգնականի վարձատրութեան վրայ:

Նախահաշիւ

Դատա-Ոստիկանական դասընթացների 3 ամսւայ տևողութեամբ
յուլիսի 15-ից մինչև 15 հոկտեմբերի 1919 թ.

ամսական 3 ամիս

1. Դասընթացների ղեկավար՝ Դատախազի Օգնականին
վարձատրութիւն …… 1500 ռուբ[լի]
4500 ռ[ուբլի]
2. Ծառայ …… 400 ռուբ[լի]
4500 [ռուբլի]
3. Դասընթացների կահաւորումն …… 25000 ռուբ[լի]

Գումար 307000
ռուբ[լի]

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, 16, թ. 372–373: Սևագիր: Ձեռագիր:

N 3
ՀՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հուլիսի 1919 թ.
[Երևան]

Օրէնք

Միլիցիոներական դասընթացներ բանալու համար 80640 ր[ուբլի] լրացուցիչ վարկ բանալու մասին.

«Բանալ Ներքին Գործերի Մինիստրութեանը ութսուն հազար վեց հարիւր քառասուն (80640) ռուբլու լրացուցիչ վարկ Հայաստանի 14 գաւառներում 8 ամսով միլիցիոներական դասընթացներ բանալու համար»:

Մինիստրների Խորհրդի Գործերի կառավարիչ Գ. Խոջամիրեան [ստորագրություն]

Սոյն օրէնքը հաստատուած է Մինիստրների Խորհրդի 1919 թւի յուլիսի 12-ի նիստում, համաձայն Հայաստանի Խորհրդի 1919 թւի յունիսի 5-ին ընդունած օրէնքի:

Մինիստրների Խորհրդի Գործերի կառավարիչ Գ. Խոջամիրեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 369: Բնագիր: Ձեռագիր:

N 4
ԶՈՀՐԱՊ ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻ՝ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԾ ԾՐԱԳԻՐԸ

28 փետրվարի 1919 թ.
[Երևան]

Ծրագիր Ոստիկանական Վարժարանի

1. Տնօրէն՝ հարիւրապետ կամ տեղակալ,
2. Մարզիչ սպաներ՝ 3 [հոգի],
3. -,,- [մարզիչ] ենթասպաներ՝ 5 [հոգի],
4. Ոստիկան զինուորներ՝ 150–200 [հոգի]:

Զինուորական դասեր

1. Զինուորական մարզանք՝ Շվետական մարզանք[8],
2. Զինուորական կրթութիւն,
3. Ոստիկանական ներքին կանոնադրութիւն,

[Մասնագիտական առարկաներ]

1. Պետական կազմը և դասավորումները,
2. Օրէնսգիտութիւն (համառօտ),
3. Քաղաքային, դատական և ոստիկանական փոխյարաբերութիւնները և իրաւասութիւնները,

[8] Շվեդական մարմնամարզության հիմնադիրը համարվում է շվեդացի բժիշկ, բանաստեղծ, գիտնական և հասարակական գործիչ Պեհր Հենրիկ Լինգը (շվեդ.՝ Pehr Henrik Ling, 1776–1839), որը ստեղծեց յուրահատուկ 4 տեսակի մարմնամարզական վարժություններ, այդ թվում՝ զինվորական: Հավանաբար այս վերջինն ի նկատի ուներ Զ. Բագրևանդյանը:

4. Տեղեկագրերու պատրաստութիւններ,

5. Համառօտ մարդակազմութիւն և առողջաբանութիւն:

Ընդունելութեան պայմաններ

1. Տարիքը՝ 20–25 [տարեկան]՝ բժշկական քննութեամբ,

2. Կարդալ, գրել գիտնալը պարտաւորիչ (լեզուներ գիտնալը նախընտրելի է),

3. Անցեալին մէջ դատապարտուած պէտք չէ լինի:

Շրջան

Դպրոցական շրջանը [տևելու է] 3–5 ամիս:

Պարենաւորում

Դպրոցին պարենաւորումը Զինուորական ձևով կը կատարուի:

Զօհրապ Գ. Բագրևանդեան [ստորագրություն]

յ. գ. Ոստիկանը կը բաժանուի երկու կարգի՝ Ձիաւոր և Հետևակ:

Համազգեստը կարևոր է:

Գործնականապէս վարժեցնելու համար շրջիկ պահակի պաշտօնը կարելի է յանձնել վարժարանին:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28, թ. 3: Բնագիր: Ձեռագիր:

N 5
ՀՀ ՆԳ ՄԻՆԻՍՏՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԶՕՀՐԱՊ ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 500 4 դեկտեմբերի 1919 թ.

[Երևան]

Զօհրապ Բագրեւանդեանը նշանակվում է միլիցիօներական դպրոցի ղեկավար և դասատու սույն [թվականի] դեկտեմբերի 4-ից:

Իսկականը ստորագրել է տիար Ներքին Գործոց Մինիստրի՝ Մանասեան[9]:

Իսկականի հետ ճիշտ է՝

Գործավար [ստորագրությունը բացակայում է]:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28, թ. 6: Ձեռագիր: Պատճեն:

[9] Մանասյան Սարգիս (1880–1920), ՀՀ ՆԳ նախարարի պաշտոնակատար (1919 թ. ապրիլ-օգոստոս), ՀՅԴ անդամ:

N 6
ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատճէն

Ներքին Գործոց Նախարար
N 3448 4 դեկտեմբերի 1919 թ.
Երևան

ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԳՅՈՒԼԽԱՆԴԱՆՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐ ԶՈՀՐԱՊ ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԳՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նշանակելով Ձեզ միլիցիոներական դպրոցի ղեկավար և դասատու, յանձնարարւում է Ձեզ բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարել թէ աշակերտների ընտրութեան և թէ դասախօսներ հրաւիրելու, շէնք գտնելու, դասավանդութեան ժամանակ ծրագիրները և ձևը որոշելու վերաբերեալ:

Երևանի քաղաքային միլիցիայի պետին, գաւառական կօմիսարին և Ներք[ին] Գործ[երի] Նախարարութեան Միլիցիայի պահեստի պետին յանձնարարւում է աջակցել Ձեզ Ձեր աշխատանքների ժամանակ:

Ի. տ[եղի] Ն. Գ. Նախարարի [Ա. Գյուլխանդանյան[10]]

Վարչութեան և Միլիցիայի Բաժնի Տեսուչ [ստորագրությունը բացակայում է]

Գործավար [ստորագրությունը բացակայում է]

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28: Պատճեն: Ձեռագիր:

[10] Գյուխանդանյան Աբրահամ, ՀՀ ՆԳ նախարար (1919 թ. օգոստոս – 1920 թ. մայիս), ՀՅԴ անդամ:

N 7
ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ Զ. ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատճէն

N 3450 4 դեկտեմբերի 1919 թ.

Երևան

Ն[երքին] Գ[ործերի] Մ[ինիստրության] Միլիցիայի պահեստի պետին, Երևանի քաղաք[ային] միլիցիայի պետին և Երևանի Գավառական Կոմիսարին

Սորանով առաջարկում եմ Ձեզ ցոյց տալ աջակցութիւն պ. Զօհրապ Բագրևանդեանին իր աշխատանքների ժամանակ, որը նշանակւած է միլիցիօներական դպրոցի ղեկավար և դասատու:

ի. տ. Նախարարի [ստորագրությունը բացակայում է]

Վարչութեան և Միլիցիայի Բաժնի Տեսուչ [ստորագրությունը բացակայում է]

Գործավար [ստորագրությունը բացակայում է]

Մակագրություն՝ «գ. 1090/1919»:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28, թ. 1: Պատճեն: Ձեռագիր:

N 8
ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

[դեկտեմբեր 1919 թ.]

[Երևան]

Անուն Ազգանունը պաշտօնը	Կատարած պաշտօնը և դասաւանդած առարկան	Շաբաթական քանի դասա[ժամ]	Ծանուցում
Դպրոցի ղեկավար՝ Զօհրապ Բագրևանդեան	1. Զինուորական կրթութիւն և միլիցիոներական պատրաստութիւն, 2.Տեղեկագրելու պատրաստութիւն, 3.[11] 4. Համառօտ մարդակազմութիւն,	15 ժամ	

[11] Այս կետը ջնջված է:

	5. Զինուորական մարզանք և այլն:		
Իրաւագէտ՝ Թաթեւոսեան՝ դասատու[12]	1. Համառօտ օրէնսդրութիւն և քաղ[աղաքացիական] իրաւունք, 2. Միլիցիօներական փոխյարաբերութիւնները և իրաւասութիւնները	8 ժամ	
Միլիցապետ Ռուբեն Պապիկեան[13]	1. Միլիցիօներական ներքին կանոնադրութիւն	6 ժամ	
Դպրոցի գրագիր՝ [Հ]այկ Շամշադինեան	Առաւօտից մինչև երեկոյ պարտաւորիչ աշխատանք		

Դպրոցի ղեկաւար՝ Զօհրապ Գ. Բագրևանդեան [ստորագրություն]

Մակագրություն՝ «Իրաւագիտութեան ուսուցչին պիտի նշանա[կի] Արդա-ր[ա]դ[ատության] Մինիստրի [կողմից], խնդրեմ դիմէք նրան՝ 18/XII [1919 թ.]»: [ստորագրությունը ընթեռնելի չէ]:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 236, թ. 2: Պատճեն: Ձեռագիր:

N 9
ԳՐՈՒԹՅՈՒՆ Զ. ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ 10 ՀԱԶԱՐ ՌՈՒԲԼԻ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

[Копия]

N 3656 19 декабря 1919 г.

К. N 4020 [г. Ереван]

Надпись на отношении Заведывающего школой милиционеров Багревандянца от 17/ XII [1919 г.] за N 1 о выдаче 10000 р[ублей] на расходы по школе

[12] Սկզբնապես իրավագիտության դասատու է նշված եղել այլ անձնավորություն, սակայն նրա անունը ջնջվել է՝ փոխարենը մտցվել է ոմն Թաթևոսյանը:

[13] Ռուբեն Պապիկյանը ֆրանսիական ռազմական ոստիկանության լեյտենանտ էր և Երևան էր եկել Կիլիկիայից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 123, թ. 10: 1919 թ. սեպտեմբերի 11-ին նշանակվել էր Երևանի ոստիկանապետ, տե՛ս «Ժողովուրդ», Երևան, 1919, 24 սեպտեմբերի, № 104:

Настоящую переписку препровождаю в Земско-городской отдел согласно резолюции товарища Министра внутренних дел, прошу выписать 10000 руб[лей] из сумм, открытых на расходы школы милиционеров. Означенную сумму надлежит ассигновать на имя Заведывающего школой милиционеров Багревандянца.

[подпись отсутствует]

Отметка: «Подписку отобрал».

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28, թ. 4: Պատճեն: Ձեռագիր:

N 10

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԲԱԺՆԻ ՏԵՍՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Զ. ԲԱԳՐԵՎԱՆԴՅԱՆԻՆ՝ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

[Պատճեն]

Ն[երքին] Գ[ործերի] Մ[ինիստրության] Տեսուչ

Վարչական և միլիցիայի բաժնի

N3666 20 դեկտեմբերի 1919 թ.

[Երևան]

Միլիցիոներական դպրոցի ղեկավար Բագրևանդեանին

Այսու հետ ուղարկելով Ձեր ներկայացրած ցուցակը, առաջարկում եմ կատարել Մինիստրի օգնական Մանասեանի համառոտքը. «Իրաւագիտութեան ուսուցչին պիտի նշանակի Արդարադատութեան Մինիստրը, խնդրէմ դիմէք նրան»:

Տեսուչ [ստորագրությունը բացակայում է]

Ի. տ. գործավարի՝ Ղազարեան [ստորագրություն]

Մակագրություններ՝ «Вход. N1090-1919г.». «Выяснить, каков штат. Предоставить…. [անընթ.], 26/XII.1919». «Գործին ի գիտութիւն՝ 4/2»:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28, թ. 9: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

N 11
ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՏԵՍՉԻՆ ԹՈՒՂԹ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ն[երքին] Գ[ործերի] Մ[ինիստրության]
Ղեկավար
Միլիցիոներական դպրոցի
N 2 29 դեկտեմբերի 1919 թ.
Երևան

Միլիսիոներական դպրոցի պէտքերուն գործածուելու համար կը խնդրեմ կարգադրել բաց թողնելու երկու (2) ծրար թուղթ, որուն անհրաժեշտ պէտք ունինք:

Ղեկավար Դպրոցի՝ Զօհրապ Բագրևանդեան [ստորագրություն]

Մակագրություններ՝ «Вх. № 4229, 1090/19», «Соколовскому». «Խնդրում եմ տալ երկու ծրար թուղթ դպրոցի համար՝ 30/12 [1919]»: «Отпущено [неразборчиво], № 1».

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28, թ. 8: Բնագիր: Ձեռագիր:

N 12
ПРИКАЗ МИНИСТРА ВНУТРЕННИХ ДЕЛ РА О НАЗНАЧЕНИИ МЕСЯЧНОГО ОКЛАДА РУКОВОДИТЕЛЮ ШКОЛЫ МИЛИЦИИ

Копия
N 58 24 февраля 1920 г.
[г. Ереван]

В дополнение к приказу моему от 4-го декабря 1919 г. за N500, Заведывающего школой милиции Зограба БАГРЕВАНДЯНЦА считать назначенным на ту должность с окладом содержания в четыре тысячи (4000 р[ублей]) в месяц.

Подлинный подписал: Министр внутренних дел ГЮЛЬХАНДАНЯН.

С подлинным верно: Делопроизводитель: Ка[подпись неразборчива].

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 28, թ. 11: Վավերացված պատճեն: Մեքենագիր: